

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներին համապատասխան՝
համախմբված ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն**

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	1
Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	2
Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	4



«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների, և կատարել ենք Էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ խուսմբը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են Եական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի Եական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Եական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, այլ ոչ թե խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է Եական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Եական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններ և իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ հսկի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք հսկի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Տնօրեն



KPMG Armenia LLC


«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
1 մարտի 2021թ.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

վն. ՀՀ դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	294,272	302,310
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	8	10,673	11,080
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		43	68
Տրամադրված փոխառություններ		2	15
Հետաձգված հարկային ակտիվներ	24	5,293	6,692
Շահութահարկի գծով ոչ ընթացիկ կանխավճարներ		676	676
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		289	265
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		311,248	321,106
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	16,585	15,538
Տրամադրված փոխառություններ		15	22
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	53,213	43,897
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար		22	21
Ժամկետային ավանդներ	11	865	847
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	14,143	8,771
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		84,843	69,096
Ընդամենը ակտիվներ		396,091	390,202
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	13	370,932	370,932
Պահուստներ		-	1,453
Լրացուցիչ կապիտալ		216	216
Կուտակված վնաս		(87,185)	(87,937)
Ընդամենը սեփական կապիտալ		283,963	284,664
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	14	11,001	49,598
Պետական շնորհներ	15	170	208
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		11,171	49,806
Ընթացիկ պարտավորություններ			
Վճարվելիք շահութահարկ		12	2
Վարկեր և փոխառություններ	14	46,573	3,127
Վարձակալության գծով պարտավորություններ		2,388	2,366
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	51,984	50,237
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		100,957	55,732
Ընդամենը պարտավորություններ		112,128	105,538
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		396,091	390,202

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2021թ. մարտի 1-ին:


 Հրանտ Թադևոսյան
 Վարչության նախագահ – գլխավոր տնօրեն


 Վարդան Նաչարյան
 Գլխավոր հաշվապահ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Հասույթ	17	252,464	240,356
Վաճառքի ինքնարժեք	18	(229,872)	(222,863)
Համախառն շահույթ		22,592	17,493
Այլ գործառնական եկամուտ	19	1,590	1,007
Ընդհանուր և վարչական ծախսեր	20	(10,732)	(11,826)
Այլ գործառնական ծախսեր	21	(5,166)	(2,570)
Գործառնական շահույթ		8,284	4,104
Ֆինանսական եկամուտ	22	95	1,083
Ֆինանսական ծախսեր	23	(7,671)	(4,544)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		708	643
Շահութահարկի գծով ծախսեր	24	(1,409)	(119)
Տարվա (վնաս)/շահույթ		(701)	524
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(701)	524

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Կանոնադրական կապիտալ	Պահուստներ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդն առ 1 հունվարի 2019թ.	370,932	1,453	216	(88,461)	284,140
Ընդամենը 2019թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	524	524
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	370,932	1,453	216	(87,937)	284,664
Ընդամենը 2020թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(701)	(701)
Փոխանցում	-	(1,453)	-	1,453	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	370,932	-	216	(87,185)	283,963

5-51 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

<i>սյն. ՀՀ դրամ</i>	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		708	643
Ճշգրտումներ.			
Մաշվածություն	7,8	12,192	12,008
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում	21	332	736
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում	19	(52)	(102)
Հիմնական միջոցների արժեզրկում	19,21	(41)	7
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ	19	(60)	(62)
Շնորհիված հիմնական միջոցներից եկամուտ	19	(38)	(38)
Փոխարժեքային տարբերություններից զուտ եկամուտ	21,23	7,540	(921)
Տոկոսային եկամուտ	22	(95)	(94)
Տոկոսային ծախս	23	3,043	4,544
Պահուստների զուտ փոփոխություն		431	(42)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները		23,960	16,679
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում/(աճ)		(9,562)	(5,000)
Պաշարների նվազում		(1,719)	483
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ		76,234	144,132
Շրջանառու կապիտալի փոփոխություններ		64,952	139,615
Ստացված տոկոսային եկամուտ		93	128
Վճարված տոկոսներ		(2,640)	(4,440)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		86,366	151,982
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(3,129)	(4,353)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		33	237
Ժամկետը լրացած ավանդների մարում		275	230
Նոր ավանդների տեղաբաշխում		(280)	(365)
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից		23	226
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		(3,078)	(4,025)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մուտքեր վարկերից և փոխառություններից	14	20,399	107,799
Վարկերի և փոխառությունների մարում	14	(97,736)	(252,384)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		(77,337)	(144,585)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(579)	(131)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	12	8,771	5,530
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	12	14,143	8,771

Այն ֆինանսական գործարքները, որոնցով չի պահանջվել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում, ներառված չեն համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում և բացահայտված են Ծանոթագրություն 25-ում:

5-51 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը	6
2	Խմբի գործառնական միջավայրը	7
3	Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում	8
4	Գնահատումների և դատողությունների օգտագործում	21
5	Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	22
6	Փոխկապակցված անձանց հետ մնացորդներ և գործարքներ	24
7	Հիմնական միջոցներ	26
8	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	27
9	Պաշարներ	27
10	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	28
11	Ժամկետային ավանդներ	32
12	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33
13	Կանոնադրական կապիտալ	33
14	Վարկեր և փոխառություններ	34
15	Պետական շնորհներ	36
16	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	36
17	Հասույթի վերլուծությունն ըստ տեսակի	37
18	Վաճառքի ինքնարժեք	37
19	Այլ գործառնական եկամուտ	38
20	Ընդհանուր և վարչական ծախսեր	38
21	Այլ գործառնական ծախսեր	39
22	Ֆինանսական եկամուտ	39
23	Ֆինանսական ծախսեր	39
24	Շահութահարկ	40
25	Նշանակալի անկանխիկ ֆինանսական գործունեություն	43
26	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	43
27	Ֆինանսական ռիսկերի կառավարում	44
28	Կապիտալի կառավարում	49
29	Ֆինանսական գործիքների իրական արժեք	49
30	Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների	50

1 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») գործունեության համար:

Ընկերությունը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Այն հանդիսանում է բաժնետիրական ընկերություն՝ բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մայր ընկերությունն է «Գազպրոմ» ՀԲԸ-ն, իսկ Խմբի վերջնական հսկողությունն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության կառավարությունը:

Հիմնական գործունեությունը. Խմբի հիմնական գործունեությունն է բնական գազի ներկրումն ու բաշխումը, Հայաստանի Հանրապետությունում գազի խողովակաշարերի համակարգի շահագործումը և էլեկտրաէներգիայի արտադրությունը իր ջերմային (գազային) էլեկտրակայանի միջոցով: Խումբն ունի բացառիկ լիցենզիա Հայաստանի Հանրապետությունում գազի բաշխման համար: Գազի փոխադրման և բաշխման սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ «ՀԾԿՀ») կողմից:

Ստորև ներկայացված են գազի սակագները (ներառյալ ԱԱՀ) ըստ սպառողների տեսակների:

- ա) Սոցիալապես անապահով սպառողների համար, որոնք տարեկան սպառում են 600 խորանարդ մետրից պակաս քանակությամբ գազ, սակագինը սահմանվել է 100,000 ՀՀ դրամ 1,000 խորանարդ մետրի դիմաց, իսկ տարեկան 600 խորանարդ մետրից ավել քանակությամբ գազ սպառողների համար՝ 139,000 ՀՀ դրամ 1,000 խորանարդ մետրի դիմաց:
- բ) Գյուղատնտեսության ոլորտում գործող ջերմոցների համար նոյեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում սպառված գազի համար սակագինը սահմանվել է 224 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (նախքան 2020թ. հուլիսի 19-ը՝ 212 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ) 1,000 խորանարդ մետրի դիմաց, մնացած ժամանակահատվածի համար գործել են (դ) կետում նշված սակագները:
- գ) Գյուղատնտեսական սննդի վերամշակողների համար սակագինը սահմանվել է 224 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (նախքան 2020թ. հուլիսի 19-ը՝ 212 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ) 1,000 խորանարդ մետրի դիմաց:
- դ) Մնացած սպառողների համար, որոնք ամսական սպառում են 10,000 խորանարդ մետրից պակաս քանակությամբ գազ, սակագինը սահմանվել է 139,000 ՀՀ դրամ (նախքան 2020թ. հուլիսի 19-ը՝ 139,000 ՀՀ դրամ) 1,000 խորանարդ մետրի դիմաց և ամսական 10,000 խորանարդ մետրից ավել քանակությամբ գազ սպառողների համար՝ 255.91 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (նախքան 2020թ. հուլիսի 19-ը՝ 242.1 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ) 1,000 խորանարդ մետրի դիմաց:

Բնական գազի հիմնական ծավալը գնվում է «Գազպրոմ Էքսպորտ» ՍՊԸ-ից (հանդիսանում է մայր ընկերության ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություն) (տես Ծանոթագրություն 6):

1 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը (շարունակություն)

Ստորև աղյուսակում ներկայացված են համախմբված դուստր կազմակերպությունները.

Դուստր կազմակերպություն	Գրանցման երկիր	2020թ.	2019թ.
		Մեփականություն/ Ձայնի իրավունք	Մեփականություն/ Ձայնի իրավունք
«Արմավիրի գազմաշ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%
«Ավտոգազ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%
«Բուլթան» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%
«Տրանսգազ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%
«Կորպորատիվ տեխնոլոգիական կապի միջոցների և համակարգերի շահագործում և սպասարկում» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

Դուստր կազմակերպությունների հիմնական գործունեությունն է.

«Արմավիրի գազմաշ» ՍՊԸ-ն արտադրում է գազասարքավորումներ, ինչպես նաև բնագավառին առնչվող այլ սարքավորումներ:

«Ավտոգազ» ՍՊԸ-ն իրականացնում է սեղմված գազի պահեստավորում և վաճառք, ավտոգազալիցքավորման կայանների շահագործում և տեխնիկական սպասարկում, գազաբաշխային սարքավորումների տեղադրում:

«Բուլթան» ՍՊԸ-ն իրականացնում է հեղուկ գազի գնում և հետագա վերավաճառք, հեղուկ գազի բաշխման նորոգում և վկայագրում, ինչպես նաև գազալիցքավորման կայանների շահագործում:

«Տրանսգազ» ՍՊԸ-ն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնական գազի փոխադրում և գազի ստորգետնյա պահեստարանների կառավարում:

«Կորպորատիվ տեխնոլոգիական կապի միջոցների և համակարգերի շահագործում և սպասարկում» ՍՊԸ-ն մատուցում է կապի և SS ծառայություններ:

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0091, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43:

2 Խմբի գործառնական միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և հարկային խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց զինադադարի մասին համաձայնությունը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և COVID-19 բռնկումն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

2 Խմբի գործառնական միջավայրը (շարունակություն)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Ղեկավարությունը գտնում է, որ մինչ այժմ COVID 19 նշանակալի ազդեցություն չի ունեցել Խմբի գործունեության վրա, քանի որ հասույթը և հասույթի հավաքագրման մակարդակը պահպանում էին կայունությունը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

Պատրաստման հիմունքները. Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ. Դուստր կազմակերպություններն այն ներդրման օբյեկտներն են (ներառյալ՝ կառուցավորված կազմակերպությունները), որոնք վերահսկվում են Խմբի կողմից, քանի որ Խումբն (i) ունի կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հասույցների վրա, (ii) կրում է հասույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հասույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից և (iii) հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հասույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար: Մեկ այլ կազմակերպության նկատմամբ Խմբի իրավասությունների առկայությունը գնահատելիս հաշվի է առնվում իրական իրավունքների առկայությունն ու ազդեցությունը, ներառյալ իրական պոտենցիալ ձայնի իրավունքը: Իրավունքն իրական է համարվում, եթե կրողն ունի այդ իրավունքն իրացնելու գործնական հնարավորություն՝ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության նշանակալի գործունեության կառավարման վերաբերյալ որոշում կայացնելիս: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է այն ժամանակ, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր կազմակերպության նկատմամբ (ձեռքբերման ամսաթիվ), և դադարում է, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ:

Արտարժույթի փոխարկում. Խմբի յուրաքանչյուր համախմբված ընկերության ֆունկցիոնալ արժույթն այն առաջնային տնտեսական միջավայրի արժույթն է, որում գործում է տվյալ ընկերությունը: Ընկերության և նրա դուստր կազմակերպությունների ֆունկցիոնալ արժույթը և Խմբի հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է ՀՀ դրամը:

Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են յուրաքանչյուր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի տարեվերջի պաշտոնական փոխարժեքով յուրաքանչյուր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս/զուտ այլ գործառնական եկամուտ/ծախսեր:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Փոխառություններին և դրամական միջոցներին և դրանց համարժեքներին վերաբերող արտարժույթի փոխարկումից շահույթը կամ վնասը ներկայացվում է համախմբված շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական եկամտի կամ ծախսերի կազմում: Արտարժույթի փոխարկումից առաջացող մյուս այլ շահույթը կամ վնասը վնասը ներկայացվում է համախմբված շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ այդ գործառնական եկամտի/ծախսերի կազմում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ, 1 եվրո = 641.11 ՀՀ դրամ, 1 ռուբլի = 7.02 ՀՀ դրամ (2019թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 479.7 ՀՀ դրամ, 1 եվրո = 537.26 ՀՀ դրամ, 1 ռուբլի = 7.77 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է:

Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են այն ժամանակահատվածում, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, եթե Խումբը վստահ է, որ ակտիվի օգտագործումից ապագա տնտեսական օգուտները կգերազանցեն դրա արդյունավետության նախատեսված նորմատիվները՝ միաժամանակ փոխարինման ենթակա մասերի դուրսգրմամբ: Հիմնանորոգման արժեքն ամորտիզացվում է համապատասխան հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացած ժամկետի ընթացքում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հայտանիշ: Եթե որևէ նման հայտանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ տարիներում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե տեղի են ունեցել փոփոխություններ այն գնահատումներում, որոնք կիրառվել են ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը որոշելու համար:

Հասույթը հաշվեկշռային արժեքի հետ համեմատելու արդյունքում որոշված՝ օտարումից շահույթը կամ վնասը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ գործառնական շահույթի կամ ծախսերի բաժնում:

Մաշվածություն. Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Էլեկտրաէներգիայի արտադրությունում օգտագործվող հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է արտադրական եղանակով: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Օգտակար ծառայություն՝ արտահայտված տարիներով

Շենքեր	8-ից 83
Խողովակաշարեր և հորեր	10-ից 83
Այլ հիմնական միջոցներ	5-ից 25

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Խումբը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Բնական գազի տեխնոլոգիայես անհրաժեշտ մնացորդը դասակարգվում է որպես հիմնական միջոց, և դրա մաշվածությունը հաշվարկվում է խողովակաշարերի և հորերի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Վարձակալություն. Պայմանագրի սկզբում Խումբը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Խումբը՝ որպես վարձակալ. Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը: Այնուամենայնիվ, անշարժ գույքի վարձակալության համար Խումբը որոշել է չառանձնացնել ոչ վարձակալության բաղադրիչները և հաշվառել վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչները որպես վարձակալության մեկ բաղադրիչ:

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խումբը չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրառործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ գեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Խումբը որպես գեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Խումբը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Խումբը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Խմբի գնահատականի փոփոխություն, եթե Խումբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Ներդրումային գույքի սահմանմանը չհամապատասխանող օգտագործման իրավունքի ձևով ակտիվները Խումբը ներկայացնում է «օգտագործման իրավունքի ձևով ակտիվները» կազմում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ «վարձակալության գծով պարտավորությունների» կազմում՝ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարները Խումբը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, օրինակ՝ չեն արտացոլում շուկայական դրույքների փոփոխությունները, չպետք է ներառվեն վարձակալության գծով պարտավորության չափման մեջ: Մուսնիցիպալ կամ դաշնային հողատարածքների վարձակալությունների հետ կապված, որոնց դեպքում վարձավճարները հիմնված են հողատարածքի կադաստրային արժեքի վրա և չեն փոխվում մինչև այդ արժեքի կամ կիրառելի դրույքների (կամ այդ երկուսի) հաջորդ վերանայումն իրավասու մարմնիների կողմից, Խումբը որոշել է, որ ներկայումս կիրառվող վերանայման մեխանիզմի համաձայն վարձակալվող հողատարածքների վարձավճարները չեն կարող դիտարկվել ոչ որպես փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, ոչ էլ որպես ըստ էության հաստատուն վարձավճարներ, և այդ իսկ պատճառով, ներառված չեն վարձակալության գծով պարտավորության չափման մեջ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Խումբը՝ որպես վարձատու. Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը: Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, յուրաքանչյուր վարձակալության սկզբում այն որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Խումբը ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությունով փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Խումբը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում. Ամորտիզացման ենթական ակտիվները դիտարկվում են արժեզրկման, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունների վկայում են, որ հաշվեկշռային արժեքը չի կարող լինել փոխհատուցվող: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն չափով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարն ակտիվի իրական արժեքից՝ հանած օտարման ծախսումների և օգտագործման արժեքներից առավելագույնն է: Արժեզրկման գնահատման նպատակների համար ակտիվները խմբավորվում են նվազագույն մակարդակի, որի համար կան հիմնականում անկախ դրամական ներհոսքեր (դրամաստեղծ միավորներ): Ոչ ֆինանսական ակտիվների նախնական արժեզրկումը վերանայվում է հնարավոր փոփոխման տեսանկյունից՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում. Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հողվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ. Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում. Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացումը կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ. Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում:

Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Խումբն ունի ֆիքսված տոկոսադրույքներով բանկային վարկեր, որոնց տոկոսադրույքները բանկերը կարող են վերանայել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) հիմնական տոկոսադրույքի փոփոխության արդյունքում: Խումբը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Խումբը այս վարկերը դիտարկում է որպես լողացող տոկոսադրույքով վարկեր:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ. Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ. Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ բանկերի կողմից ֆիքսված տոկոսադրույքների փոփոխությունները ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունի կատարել նման փոփոխություն և Խումբը հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքը Խումբը հաշվառում է կիրառելով լոդացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես օգուտ կամ կորուստ մարումից: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ. Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով քանի որ (i) պահվում են պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և այդ պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ և (ii) նախարոշված չեն որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույթի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հաշվեկշռում ներկայացվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Փոխառություններ. Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, առաջացած գործարքի ծախսերից զուտ, և համապատասխանաբար հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Փոխառության ծախսերի կապիտալացում. Փոխառության ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են այն ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, որի նախապատրաստումը ենթադրվող օգտագործման կամ վաճառքի համար պահանջում է զգալի ժամաքանակ (որակավորված ակտիվ), կապիտալացվում են որպես տվյալ ակտիվի արժեքի մի մաս, եթե կապիտալացման սկիզբը 2009թ. հունվարի 1-ին է կամ ավելի ուշ:

Կապիտալացումը սկսվում է այն պահից, երբ ա) Խումբը կրում է որակավորված ակտիվի հետ կապված ծախսեր, բ) Խումբը կրում է փոխառության հետ կապված ծախսեր և գ) Խումբը ձեռնարկում է գործողություններ, որոնք անհրաժեշտ են ակտիվը նպատակային օգտագործման կամ վաճառքի պատրաստելու համար:

Փոխառությունների ծախսերի կապիտալացումը շարունակվում է մինչև այն պահը, երբ ակտիվները հիմնականում պատրաստ են օգտագործման կամ վաճառքի:

Խումբը կապիտալացնում է փոխառությունների գծով այն ծախսերը, որոնցից հնարավոր կլիներ խուսափել, եթե այն չկատարեր որակավորված ակտիվների գծով կապիտալ ծախսումներ: Փոխառությունների գծով կապիտալացված ծախսումները հաշվարկվում են Խմբի ֆինանսավորման միջին արժեքով (միջին կշռված տոկոսային ծախսերը վերագրվում են որակավորված ակտիվների գծով ծախսերին), բացառությամբ այն դեպքերի, երբ միջոցները փոխառվում են ուղղակիորեն որակավորված ակտիվի ձեռքբերման համար: Եթե դա տեղի է ունենում, կապիտալացվում են տվյալ փոխառության փաստացի ծախսերը, հանած տվյալ փոխատվական միջոցների ժամանակավոր ներդրումից առաջացած որևէ ներդրումային եկամուտ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկերը, բացառությամբ շահութահարկի, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Հետաձգված հարկային ակտիվները կարող են հաշվանցվել հետաձգված հարկային պարտավորությունների դիմաց միայն Խմբի յուրաքանչյուր առանձին ընկերության շրջանակներում: Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Խումբը վերահսկում է այն ժամանակավոր տարբերությունների հակադարձումը, որոնք վերաբերում են դուստր կազմակերպությունների շահաբաժինների գծով հարկերին կամ դրանց վաճառքից շահույթին: Խումբը չի արտացոլում հետաձգված հարկային պարտավորությունները նման ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունն ակնկալում է ժամանակավոր տարբերությունների հակադարձում տեսանելի ապագայում:

Անորոշ հարկային դիրքեր. Խմբի անորոշ հարկային դիրքերը գնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Պարտավորությունների գրանցման համար շահութահարկի դիրքերը գնահատվում են ղեկավարության կողմից այնպես, որ դիրքերի վերանայումը հարկային մարմինների կողմից չառաջացնի լրացուցիչ հարկերի գանձման անհրաժեշտություն: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Տուգանքների, տուկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորությունը ծագում է հաճախորդներին ապրանքների հանձնման կամ ծառայությունների մատուցման ժամանակ: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ից, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն: Դեբիտորական պարտքերի արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտապանի համախառն գումարում, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է միջին կշռված արժեքով՝ գազի համար և «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով՝ այլ պաշարների համար: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանելով արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայություններն ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Խումբը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո:

Պահուստներ. Պահուստներն իրենցից ներկայացնում են Խմբի շահույթից ձևավորված գումարները:

Լրացուցիչ վճարված կապիտալ. Լրացուցիչ վճարված կապիտալն իրենից ներկայացնում է բաժնետոմսերի հայտարարված արժեքից միակ բաժնետիրոջ կողմից ստացված կանխիկի ավելցուկ:

Շահաբաժիններ. Շահաբաժինները գրանցվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից այն ժամանակաշրջանում, որում դրանք հայտարարագրվել և հաստատվել են: Այն շահաբաժինները, որոնք հայտարարագրվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո և նախքան ֆինանսական հաշվետվությունների հրապարակման վավերացումը, ներկայացվում են հետագա իրադարձությունների ծանոթագրությունում:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. Պարտավորությունների և վճարների գծով պահուստներն անորոշ ժամանակով և գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեզրկվում են, երբ Խումբը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավաբանորեն սահմանված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, ինչպես նաև հնարավոր է արժանահավատորեն գնահատել պարտավորության չափը:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Հասույթի ճանաչում. Հասույթը Խմբի բնականոն գործունեության ընթացքում առաջացած եկամուտն է: Հասույթը ճանաչվում է գործարքի գնի չափով: Գործարքի գինն իրենից ներկայացնում է հատուցում, որի համար Խումբն ակնկալում է իրավունք ստանալ խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը հաճախորդին փոխանցելու դիմաց՝ առանց երրորդ կողմերի անունից ստացված գումարների հաշվառման: Հասույթը ճանաչվում է՝ հանած ավելացված արժեքի հարկը:

Խումբը սահմանում է հետևյալ կատարման պարտավորությունները՝ բնական գազի վաճառք, բնական գազի փոխադրում և էլեկտրաէներգիայի վաճառք:

Խումբը ճանաչում է բնական գազի վաճառքից ստացված հասույթը, երբ ապրանքի նկատմամբ հսկողությունը փոխանցվել է, քանի որ, երբ գազը մատակարարվում է հաճախորդին, վերջինս լիիրավ իրավունք ունի տնօրինելու այն, և առկա չեն չկատարված պարտավորություններ, որոնք կարող էին ազդել հաճախորդի կողմից ապրանքի ընդունման վրա: Խումբը բնական գազը վաճառում է պայմանագրերով սահմանված ֆիքսված գնով: Դեբիտորական պարտքը ճանաչվում է, երբ ապրանքն առաքվում է հաճախորդին, քանի որ դա այն պահն է, երբ դիտարկումն անվերապահ է, քանի որ նախքան վճարումը պահանջվում է միայն ժամանակի ընթացք:

Խումբը ժամանակի ընթացքում փոխանցում է ապրանքի կամ ծառայության նկատմամբ վերահսկողությունը և, հետևաբար, կատարում է արտադրողականության պարտավորություն, և բնական գազի փոխադրման և էլեկտրաէներգիայի վաճառքի հետ կապված եկամուտները ճանաչում է ժամանակի ընթացքում, քանի որ հաճախորդը միաժամանակ ստանում և օգտագործում է համապատասխան առավելություններ: Հաճախորդներին հաշիվները ներկայացվում են յուրաքանչյուր ամիս՝ համապատասխան օրացուցային ամսում վաճառված էլեկտրաէներգիայի/բնական գազի փաստացի ծավալի հիման վրա: Հասույթը ճանաչվում է այն գումարով, որով Խումբն իրավունք ունի հաշիվ ներկայացնել, քանի որ այդ գումարն ուղղակիորեն համապատասխանում է այսօրվա դրությամբ հաճախորդի համար Խմբի կատարված աշխատանքի արժեքին:

Հաճախորդների հետ պայմանագրերից Խումբը չունի էական պայմանագրային ակտիվներ: Պայմանագրային պարտավորությունները ճանաչվում են հաճախորդներից ստացված կանխավճարի գծով և հանդիսանում են Խմբի պարտավորությունը՝ հաճախորդին փոխանցել ապրանքները կամ ծառայությունները, որոնց գծով Խումբը ստացել է հատուցում: Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում այն ներկայացված է առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում:

Բոլոր տեսակի եկամուտների գծով պայմանագրերը չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ, քանի որ պայմանագրային կողմերի միջև համաձայնեցված վճարումների պայմանները հաճախորդներին կամ Խմբին չեն ապահովում ֆինանսավորումից ստացված զգալի օգուտով: Խումբը չի ակնկալում պայմանագրերի ստորագրում, որտեղ խոստացված ապրանքների կամ ծառայությունների հաճախորդին փոխանցման և վերջինիս կողմից դրանց վճարման միջև ընկած ժամանակահատվածը գերազանցում է մեկ տարին: Որպես հետևանք, Խումբը չի փոփոխում գործարքի գները փողի ժամանակային արժեքի համար:

Բոլոր պարտքային գործիքների գծով տոկոսային եկամուտներն արտացոլվում են հաշվեգրման եղանակով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Նման հաշվարկը տոկոսային եկամուտների և ծախսերի մեջ ներառում է բոլոր միջնորդավճարներն ու վճարումները, որոնք վճարվել և ստացվել են պայմանագրի կողմերից, և արդյունավետ տոկոսադրույքի, գործարքի ծախսերի, ինչպես նաև բոլոր այլ պարզավճարների կամ զեղչերի անբաժանելի մասն են կազմում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում (շարունակություն)

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, տարեկան վճարովի արձակուրդը, ինչպես նաև հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Խմբի աշխատակիցների կողմից: Խումբը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական կամ կառուցողական պարտականություն:

Ներկայացման փոփոխություն. Անհրաժեշտության դեպքում համապատասխան գումարները ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա գումարների ներկայացմանը համապատասխանեցնելու նպատակով:

Թողարկումից հետո համախմբված ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Խմբի ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Խումբը կատարում է գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություններ 10-ում և 27-ում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների համար առկա փորձը: Այս ակտիվների հետ կապված ապագա տնտեսական շահույթը հիմնականում կստացվի դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացող ժամկետը, հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Խմբի համար տնտեսական շահույթ կառաջացնեն: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրիչներից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխություններից:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում (շարունակություն)

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնհատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտվող):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

5 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2020թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

(ա) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Ընկերությունը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գանահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Խումբը որոշել է, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչ փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

5 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

(բ) Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. Փուլ 2 (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Փոփոխություններն անդրադառնում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա ուղենիշային տոկոսադրույքի փոփոխման արդյունքում, ներառյալ փոփոխությունների ազդեցությունը պայմանագրային դրամական հոսքերի կամ հեջավորման հարաբերությունների վրա՝ ուղենիշային տոկոսադրույքն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով փոխարինելու արդյունքում: Փոփոխությունները նախատեսում են գործնական բնույթի ազատում ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 որոշակի պահանջներից, որոնք վերաբերում են.

- ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով պայմանագրերով նախատեսված դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություններին և
- հեջի հաշվառմանը:

Դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն. Փոփոխությունները Խմբից կպահանջեն հաշվառել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունը, ինչը պահանջում է թարմացնել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման հետ կապված:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի LIBOR դրույքով 57,527 մլն. ՀՀ դրամ վարկեր, որոնք ենթակա են IBOR դրույքով բարեփոխման: Խումբն ակնկալում է, որ 2021թ-ին այս վարկերի ուղենիշային տոկոսադրույքը կփոխվի SOFR դրույքի և որ այս փոփոխությունների գծով ճշգրտումներ կատարելու արդյունքում չի առաջանա նշանակալի օգուտ կամ կորուստ:

Հեջի հաշվառում. Փոփոխությունները նախատեսում են բացառություններ հեջի հաշվառման պահանջների հետ կապված հետևյալ ոլորտներում.

- Թույլ տալ փոփոխություն հեջավորման հարաբերության նախորդման հետ կապված:
- Բարեփոխումով պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար դրամական հոսքերի հեջում հեջավորված հոդվածի գծով փոփոխություն կատարելիս՝ դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը կդիտարկվի որպես այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի վրա հիմնված, որով որոշվում են են հեջավորված ապագա դրամական հոսքերը:
- Երբ հոդվածների խումբը նախորդվում է որպես հեջավորված հոդված, և խմբի հոդվածի հետ կապված կատարվում է փոփոխություն բարեփոխումով պահանջվող փոփոխություններն արտացոլելու համար, հեջավորված հոդվածները բաշխվում են ենթախմբերի հեջավորվող ուղենիշային տոկոսադրույքների հիման վրա:
- Եթե Խումբը ողջամտորեն ակնկալում է, որ այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքն առանձին նույնականացվող է 24 ամսվա ընթացքում, ապա չի արգելվում տոկոսադրույքը նախորդել որպես պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ, եթե այն առանձին նույնականացվող չէ նախորդման ամսաթվի դրությամբ:

Հեջի հաշվառման բացակայության պատճառով Խումբը չի ակնկալում որևէ ազդեցություն IBOR-ի անցման հետ կապված:

5 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Բացահայտում. Փոփոխությունները Խմբից կպահանջեն բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում առաջացող ռիսկերին Ընկերության ենթարկվածության և ռիսկերի կառավարման համար իրականացվող համապատասխան գործունեության վերաբերյալ:

Անցում. Խումբը մտադիր է կիրառել փոփոխությունները 2021թ. հունվարի 1-ից: Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա 2020թ. կամ նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված գումարների վրա:

(գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- COVID-19 բռնկման հետ հետ կապված զիջումներ վարձակալության գծով (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ

6 Փոխկապակցված անձանց հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ո՛չ միայն իրավական կառուցվածքի վրա:

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

	2020թ.		2019թ.	
	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Այլ	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Այլ
<i>մլն. ՀՀ դրամ</i>				
Վարկեր և փոխառություններ	13	-	11	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	39,556	-	36,865	-

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.

6 Փոխկապակցված անձանց հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների համար փոխկապակցված կողմերի հետ գործարքները հետևյալն են:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.		2019թ.	
	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Այլ	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Այլ
Գազի գնումներ	178,742	-	171,841	-
Այլ ծառայությունների և նյութերի գնումներ	31	-	172	-
Տոկոսային ծախս	113	-	295	-
Այլ ծախսեր	6	-	-	-

Ղեկավար անձնակազմին հատուցումը ներկայացված է ստորև:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
<i>Կարճաժամկետ հատուցումներ.</i>		
- Աշխատավարձ	932	1,199
- Կարճաժամկետ պարգևավճարներ	39	196
Ընդամենը	971	1,395

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմին հատուցման հետ կապված կան հաշվեգրված պարտավորություններ 37 մլն. ՀՀ դրամ չափով (2019թ.՝ 80 մլն. ՀՀ դրամ): Կարճաժամկետ պարգևավճարները ենթակա են ամբողջությամբ վճարման 12 ամսվա ընթացքում այն ժամանակահատվածի վերջից սկսած, որի ընթացքում ղեկավարությունը տրամադրել է համապատասխան ծառայությունները:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի շարժերը հետևյալն են.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Հոդ և շենքեր	Խողովա- կաշարեր և հորեր	Այլ հիմնական միջոցներ	Անավարտ շինարարու- թյուն	Ընդամենը
Մեղման արժեք					
Մնացորդն առ 1 հունվարի 2019թ.	77,543	196,293	193,751	5,347	472,934
Ավելացումներ	311	-	652	2,151	3,114
Օտարումներ	(123)	(335)	(433)	(64)	(955)
Վերադասակարգումներ	(3)	2,242	1,448	(3,687)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	77,728	198,200	195,418	3,747	475,093
Ավելացումներ	35	1	845	2,759	3,640
Օտարումներ	(4)	(13)	(309)	(39)	(365)
Վերադասակարգումներ	78	923	1,834	(2,835)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	77,837	199,111	197,788	3,632	478,368
Մաշվածություն					
Մնացորդն առ 1 հունվարի 2019թ.	(6,407)	(97,510)	(57,586)	(327)	(161,830)
Մաշվածություն	(1,093)	(5,405)	(4,914)	-	(11,412)
Արժեզրկում	-	(3)	(9)	(15)	(27)
Օտարումներ	7	69	405	5	486
Վերադասակարգումներ	7	(8)	-	1	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	(7,486)	(102,857)	(62,104)	(336)	(172,783)
Մաշվածություն	(1,169)	(5,679)	(4,817)	-	(11,665)
Արժեզրկում	-	57	(20)	(1)	36
Օտարումներ	-	13	302	1	316
Վերադասակարգումներ	7	9	(16)	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	(8,648)	(108,457)	(66,655)	(336)	(184,096)
Զուտ հաշվեկշռային արժեք					
Առ 1 հունվարի 2019թ.	71,136	98,783	136,165	5,020	311,104
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	70,242	95,343	133,314	3,411	302,310
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	69,189	90,654	131,133	3,296	294,272

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 11,665 մլն. ՀՀ դրամ (2019թ.՝ 11,412 մլն. ՀՀ դրամ) ընդհանուր մաշվածության ծախսից 11,109 մլն. ՀՀ դրամը (2019թ.՝ 10,522 մլն. ՀՀ դրամը) ներառված է վաճառքի ինքնարժեքում (տես Ծանոթագրություն 18), 352 մլն. ՀՀ դրամը (2019թ.՝ 353 մլն. ՀՀ դրամը)՝ ընդհանուր և վարչական ծախսերում (տես Ծանոթագրություն 20) և 287 մլն. ՀՀ դրամը (2019թ.՝ 668 մլն. ՀՀ դրամը)՝ այլ գործառնական ծախսերում (տես Ծանոթագրություն 21):

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.

8 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը հետևյալն է.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Խողովակաշար
Մնացորդն առ 1 հունվարի 2019թ.	11,545
Մաշվածություն	(465)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	11,080
Մաշվածություն	(466)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	59
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	10,673

Ընդհանուր մաշվածության ծախսն արտացոլվել է վաճառքի ինքնարժեքի կազմում:

9 Պաշարներ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Գազ գազապահեստարաններում և խողովակաշարերի համակարգում	8,784	7,626
Պահեստամասեր	4,728	3,935
Շինանյութեր	4,068	3,905
Հումք	392	364
Այլ պաշարներ	223	943
Ընթացիկ տարում պաշարների դուրսգրում	(1,610)	(1,235)
Ընդամենը պաշարներ	16,585	15,538

2020թ-ին վաճառքի ինքնարժեքում ներառված պաշարների ծախսը կազմել է 189,214 մլն. ՀՀ դրամ (2019թ.՝ 180,460 մլն. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 18:

10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր		
- Ձեռնարկություններ	35,517	35,403
- Բնակչություն	17,111	14,166
Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	6,989	8,719
Հանած՝ արժեզրկման կորստի գծով պահուստ	(7,322)	(14,746)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	52,295	43,542
Փոխհատուցելի հարկեր	41	-
Կանխավճարներ	634	210
Միասնական հաշվի մնացորդ	243	145
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	53,213	43,897

Խումբն ընտրել է ՖՀՄՄ 9-ի պարզեցված անցում մեթոդը՝ ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար, և օգտագործում է այն բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային կորուստների համար:

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Այնուամենայնիվ, դեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Խմբի հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, այդ թվում՝ այն երկրին բնորոշ պարտագանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները: Խմբի գրեթե բոլոր հաճախորդների համար առաջնային աշխարհագրական շուկան Հայաստանի Հանրապետությունն է:

Խումբն ապրանքներ է վաճառում և ծառայություններ է մատուցում անհատներին և իրավաբանական անձանց: Խմբի հասույթի մոտ 9% (2019թ-ին՝ 10%) վերագրելի է մեկ հաճախորդի հետ իրականացվող վաճառքի գործառնություններին:

Խումբը չի պահանջում գրավ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում հաճախորդների համար

Խումբն օգտագործում է պահուստավորման մատրից բոլոր անհատներից և իրավաբանական անձանցից ստացվելիք առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որը ներառում է մեծ թվով փոքր գումարով մնացորդներ:

Կորստի մակարդակը հաշվարկվում է «roll rate» մեթոդով, որը հիմնված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչ դուրս գրում հաջորդական փուլերով: «Roll rate»-երը հաշվարկվում են առանձին հիմունքով տարբեր սեզմենտներում պարտքային ռիսկին ենթարկվածության համար՝ հիմք ընդունելով գնված ծառայության տեսակը: Կորուստների դրույքը հիմնված է վերջին երեք տարիների ընթացքում կրած փաստացի պարտքային կորուստների վրա: Խմբային հիմունքով գնահատված դեբիտորական պարտքերի համար կիրառվում է արժեզրկման 100% ավելի քան 365 օր ժամկետանց հաճախորդների համախառն առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով: Պակաս ժամկետով ժամկետանց առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով կիրառվում են արժեզրկման ավելի ցածր դրույքներ:

10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվածության և խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձանց և անհատների առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձիք՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստների մակարդակ	Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձիք՝ առանց ակնկալվող պարտքային կորուստների
Ոչ ժամկետանց	9,945	(14)	(0.1%)	9,931
1 - 30 օր ժամկետանց	515	(14)	(2.7%)	501
31 - 90 օր ժամկետանց	39	(5)	(12.8%)	34
91 - 180 օր ժամկետանց	18	(6)	(33.3%)	12
181 - 365 օր ժամկետանց	162	(135)	(83.3%)	27
Ավելի քան մեկ տարի ժամկետանց	147	(147)	(100.0%)	-
	10,826	(321)	(3.0%)	10,505

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Խմբային հիմունքով գնահատված անհատներ՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստների մակարդակ	Խմբային հիմունքով գնահատված անհատներ՝ առանց ակնկալվող պարտքային կորուստների
Ոչ ժամկետանց	16,770	(4)	(0.0%)	16,766
1 - 30 օր ժամկետանց	208	(1)	(0.5%)	207
31 - 90 օր ժամկետանց	37	(2)	(5.4%)	35
91 - 180 օր ժամկետանց	15	(3)	(20.0%)	12
181 - 365 օր ժամկետանց	67	(36)	(53.7%)	31
Ավելի քան մեկ տարի ժամկետանց	14	(14)	(100.0%)	-
	17,111	(60)	(0.4%)	17,051

10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվածության և խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձանց և անհատների առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձիք՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստների մակարդակ	Խմբային հիմունքով գնահատված իրավաբանական անձիք՝ առանց ակնկալվող պարտքային կորուստների
Ոչ ժամկետանց	7,760	(11)	(0.1)%	7,749
1 - 30 օր ժամկետանց	377	(9)	(2.4)%	368
31 - 90 օր ժամկետանց	14	(1)	(7.1)%	13
91 - 180 օր ժամկետանց	5	(2)	(40.0)%	3
181 - 365 օր ժամկետանց	59	(32)	(54.2)%	27
Ավելի քան մեկ տարի ժամկետանց	383	(383)	(100.0)%	-
	8,598	(438)	(5.1)%	8,160

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Խմբային հիմունքով գնահատված անհատներ՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստների մակարդակ	Խմբային հիմունքով գնահատված անհատներ՝ առանց ակնկալվող պարտքային կորուստների
Ոչ ժամկետանց	14,082	(3)	(0.0)%	14,079
1 - 30 օր ժամկետանց	34	(1)	(2.9)%	33
31 - 90 օր ժամկետանց	3	(1)	(33.3)%	2
91 - 180 օր ժամկետանց	3	(1)	(33.3)%	2
181 - 365 օր ժամկետանց	16	(11)	(68.8)%	5
Ավելի քան մեկ տարի ժամկետանց	28	(28)	(100)%	-
	14,166	(45)	(0.32)%	14,121

Իրավաբանական անձանց գծով դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը գերազանում է 1 մլրդ. ՀՀ դրամը, Խումբը գնահատում է անհատական հիմունքով: Խումբը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք դասում է պարտքային ռիսկի համապատասխան դասին՝ հիմք ընդունելով այն տվյալները, որոնք օգտագործվում են վնասի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, դրամական միջոցների հոսքերի կանխատեսումներ և հաճախորդների մասին մամուլում առկա տեղեկատվություն) և կիրառելով պարտքի վերաբերյալ փորձագիտական դատողություն: Պարտքային ռիսկի մակարդակները որոշվում են կիրառելով որակական և քանակական գործոնները, որոնք ծառայում են որպես պարտագանցման ռիսկի հայտանիշ և համընկնում են «Moody's» վարկանիշային գործակալության արտաքին վարկանիշների սահմանումների հետ: Անհատական հիմունքով գնահատվող առևտրային դեբիտորական պարտքերի համար Խումբը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները հիմք ընդունելով ժամկետանցության կարգավիճակը և վերջին երկու տարիների ընթացքում պարտքային կորուստներ կրելու փաստացի փորձը:

10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվածության, ակնկալվող պարտքային կորուստների և անհատական հիմունքով գնահատված առևտրային դեբիտորական պարտքերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Չարժեզրկված ֆինանսական գործիքների ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կարուստներ	Արժեզրկված ֆինանսական գործիքների ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կարուստներ	Ընդամենը
Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձիք ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները	24,861	6,819	31,680
Ակնկալվող պարտքային կորուստներ	(122)	(6,819)	(6,941)
Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձիք առանց ակնկալվող պարտքային կորուստների	24,739	-	24,739

Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձանց 24,861 մլն. ՀՀ դրամ գումարով առևտրային դեբիտորական պարտքերը ժամկետանց կամ արժեզրկված չեն: Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձանց 6,819 մլն. ՀՀ դրամ գումարով առևտրային դեբիտորական պարտքերն ավելի քան 365 օր ժամկետանց են:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն պարտքային ռիսկին ենթարկվածության, ակնկալվող պարտքային կորուստների և անհատական հիմունքով գնահատված առևտրային դեբիտորական պարտքերի պարտքային որակի վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Չարժեզրկված ֆինանսական գործիքների ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կարուստներ	Արժեզրկված ֆինանսական գործիքների ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կարուստներ	Ընդամենը
Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձիք ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները	21,289	14,235	35,524
Ակնկալվող պարտքային կորուստներ	(28)	(14,235)	(14,263)
Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձիք առանց ակնկալվող պարտքային կորուստների	21,261	-	21,261

10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձանց 21,289 մլն. ՀՀ դրամ գումարով առևտրային դեբիտորական պարտքերը ժամկետանց կամ արժեզրկված չեն: Անհատական հիմունքով գնահատված իրավաբանական անձանց 14,235 մլն. ՀՀ դրամ գումարով առևտրային դեբիտորական պարտքերն ավելի քան 365 օր ժամկետանց են:

Ստորև ներկայացված է առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի շարժը:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Արժեզրկման պահուստն առ 1 հունվարի	14,746	14,113
Տարվա ընթացքում պահուստի գուտ ավելացում	286	632
Տարվա ընթացքում պահուստի գումարի դիմաց դուրս գրված գումարներ	(7,710)	1
Արժեզրկման պահուստը առ 31 դեկտեմբերի	7,322	14,746

Խմբի հաճախորդներից ոչ մեկին չի տրվել արտաքին վարկանիշ: Խմբի հաճախորդների մեծամասնությունն ավելի քան 10 տարվա առևտրային հարաբերությունների պատմություն ունի Խմբի հետ, քանի որ հիմնադրման օրվանից Խումբը միակ լիցենզավորված ընկերությունն է, որը մատուցում է գազի բաշխման և գազի մատակարարման ծառայություններ:

11 Ժամկետային ավանդներ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
«Արդշինբանկ» ՓԲԸ	517	552
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ	258	245
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	50	50
«Արարատ բանկ» ՓԲԸ	40	-
Ընդամենը ժամկետային ավանդներ	865	847

Ժամկետային ավանդները տեղաբաշխված են Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված (2019թ.՝ Հայաստանի լավագույն տասնյակում, ընթացիկ և ոչ արժեզրկված): Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 27-ում: Խմբի դրամական միջոցների և դրանց համարժեքների մեծ մասը պահվում է «Moody's» վարկանիշային գործակալության Ba3 վարկանիշով հայկական բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ցպահանջ բանկային հաշիվներ	9,588	5,451
Դրամական միջոցներ ճանապարհին	4,522	1,445
Կարճաժամկետ ավանդներ	-	1,861
Առձեռն դրամական միջոցներ	33	14
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,143	8,771

Ֆինանսական գործարքները, որոնք չեն պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում և բացառված են համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունից ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

13 Կանոնադրական կապիտալ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Թողարկված բաժնետոմսերի քանակ (հազարներով)	Սովորական բաժնետոմսեր՝ գուտ գործարքի հետ կապված ծախսերից
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	73,808	370,932
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	73,808	370,932

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սովորական բաժնետոմսերի ընդհանուր հայտարարված քանակը կազմում է 73,807,598 բաժնետոմս (2019թ.՝ 73,807,598 բաժնետոմս), յուրաքանչյուր բաժնետոմսը 5,026.5 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կանոնադրական կապիտալում ներառված գործարքների ծախսի գումարը 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի դրությամբ կազմում է 62 մլն. ՀՀ դրամ: 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի դրությամբ բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերն ամբողջովին վճարված են:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.

14 Վարկեր և փոխառություններ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ոչ ընթացիկ		
Վարկեր և փոխառություններ	11,001	49,598
Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ	11,001	49,598
Ընթացիկ		
Վարկեր և փոխառություններ	46,573	3,127
Ընթացիկ վարկեր և փոխառություններ	46,573	3,127
Ընդամենը վարկեր և փոխառություններ	57,574	52,725

Խմբի վարկերը և փոխառություններն արտահայտված են հետևյալ արժույթներով.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ոչ ընթացիկ		
Վարկեր և փոխառություններ արտահայտված.		
- ԱՄՆ դոլարով	11,001	49,598
- ՀՀ դրամով	-	-
- Եվրոյով	-	-
Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ	11,001	49,598
Ընթացիկ		
Վարկեր և փոխառություններ արտահայտված.		
- ԱՄՆ դոլարով	46,540	3,091
- ՀՀ դրամով	-	-
- Եվրոյով	33	36
Ընթացիկ վարկեր և փոխառություններ	46,573	3,127
Ընդամենը վարկեր և փոխառություններ	57,574	52,725

Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային և իրական արժեքները հետևյալն են.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Հաշվեկշռային արժեք		Իրական արժեք	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Վարկեր և փոխառություններ	57,574	52,725	57,761	53,110
Ընդամենը վարկեր և փոխառություններ	57,574	52,725	57,761	53,110

14 Վարկեր և փոխառություններ (շարունակություն)

մյն. ՀՀ դրամ	Արժույթ	Անվանակ. տոկոսադր.	Մարման տարի	31 դեկտեմբերի 2020թ.		31 դեկտեմբերի 2019թ.	
				Իրական արժեք	Հաշվեկշռ. արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով չապահովված բանկային վարկեր	ԱՄՆ դոլար	Libor+4%	2021-2022	57,714	57,527	53,062	52,677
Գրավով չապահովված բանկային վարկեր	ՀՀ դրամ	0%	2022	33	33	36	36
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	5.04%	2020	13	13	11	11
Գրավով չապահովված բանկային վարկեր	ԱՄՆ դոլար	7%	2021	1	1	11	11
Ընդամենը վարկեր և փոխառություններ				57,761	57,574	53,110	52,725

Ֆինանսական գործունեությունից առաջացած զուտ պարտքի համեմատում

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է զուտ պարտքի և Խմբի ֆինանսական գործունեության արդյունքում առաջացած պարտավորությունների փոփոխության վերլուծությունը 2020թ. և 2019թ. համար: Սույն պարտավորությունների հոդվածներն արտացոլվում են համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսավորում:

մյն. ՀՀ դրամ	Պարտավորություններ ֆինանսական գործունեությունից	
	2020թ.	2019թ.
Ֆինանսական գործունեությունից առաջացած զուտ պարտավորություն առ 1 հունվարի	52,725	64,618
Մուտքեր վարկերից և փոխառություններից	20,399	107,799
Վարկերի և փոխառությունների մարում	(97,736)	(252,384)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	(77,337)	(144,585)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	4,590	(1,246)
Այլ փոփոխություններ		
Կրեդիտորական պարտքերից վերադասակարգում (Ծանոթագրություն 25)	77,451	133,834
Տոկոսի հաշվեգրում	3,043	4,544
Վճարված տոկոսներ	(2,640)	(4,440)
Այլ ոչ դրամային շարժ	(258)	-
Զուտ պարտավորություն առ 31 դեկտեմբերի	57,574	52,725

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

15 Պետական շնորհներ

Խումբը ձեռք է բերել պետական շնորհներ ավտոմատացված գազաչափման համակարգի կառուցման համար և ճանաչել է դրանք հետաձգված եկամտի կազմում հետևյալ կերպ.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Հետաձգված եկամուտ առ 1 հունվարի	208	246
Հետաձգված եկամտի ամորտիզացիա՝ համապատասխան ակտիվի մաշվածության հետ համադրելու համար	(38)	(38)
Հետաձգված եկամուտ առ 31 դեկտեմբերի	170	208

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	40,324	38,308
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	940	671
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում ամորտիզացված արժեքով	41,264	38,979
Վճարվելիք հարկեր	7,627	7,023
Ստացված կանխավճարներ	1,465	1,654
Աշխատակիցներին հատուցման գծով հաշվեգրված ծախսեր	1,628	2,581
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	51,984	50,237

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 39,658 մլն. ՀՀ դրամ առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքերն արտահայտված են ԱՄՆ դոլարով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 36,872 մլն. ՀՀ դրամ առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքերն արտահայտված են ԱՄՆ դոլարով), որոնցից 39,549 մլն. ՀՀ դրամ պարտքերն իրենցից ներկայացնում են բնական գազի գնման գծով առևտրային կրեդիտորական պարտքերը (Ծանոթագրություն 6 և Ծանոթագրություն 25):

17 Հասույթի վերլուծությունն ըստ տեսակի

Ընկերությունը հասույթը հիմնականում ստանում է գազի և էլեկտրաէներգիայի բաշխումից և վաճառքից:

«Մատուցված ծառայություններ» հոդվածը ներառում է հյուրանոցային ծառայություններից, էլեկտրական ցանցին միացման աշխատանքներից, հաճախորդների գազի բաշխման համակարգերի և գազի սարքավորումների տեխնիկական սպասարկումից, ինչպես նաև կրթական և մարզաառողջային ծառայություններից ստացված եկամուտը: Ամբողջ հասույթը, բացառությամբ հյուրանոցային ծառայությունների գծով հասույթի, ճանաչվում է ժամանակի ընթացքում:

Ամբողջ հասույթը հաճախորդների հետ պայմանագրերից է և մանրամասնեցված է հետևյալ կերպ.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Գազի վաճառք	216,881	207,420
Էլեկտրաէներգիայի վաճառք	28,396	24,781
Մատուցված ծառայություններ	6,767	7,719
Այլ	420	436
Ընդամենը հասույթ	252,464	240,356

18 Վաճառքի ինքնարժեք

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Գազի գնման ծախս	186,110	177,884
Աշխատանքի վարձատրության ծախսեր	15,540	16,777
Մաշվածություն	11,575	10,987
Տեխնոլոգիական կորուստներ (սեփական կարիքներ)	7,238	8,247
Ծառայություններ և նորոգում և սպասարկում	5,343	5,687
Գազից բացի այլ պաշարների ծախս	3,132	2,576
Այլ ծախսեր	934	705
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	229,872	222,863

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

19 Այլ գործառնական եկամուտ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Արտարժույթի փոխարկումից եկամուտ	652	40
Եկամուտ տույժերից և տուգանքներից	311	260
Վարձակալությունից եկամուտ	135	164
Եկամուտ պաշարների արժեզրկման գծով պահուստի հակադարձումից	75	190
Հիմնական միջոցների օտարումից գուտ օգուտ	64	62
Հիմնական միջոցների արժեզրկման վերականգնում	61	20
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի վերականգնում (Ծանոթագրություն 10)	52	102
Եկամուտ շնորհված հիմնական միջոցներից	38	38
Այլ եկամուտ	202	131
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	1,590	1,007

20 Ընդհանուր և վարչական ծախսեր

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Աշխատանքի վարձատրության ծախսեր	7,656	8,366
Վճարումների հավաքագրման ծախսեր	913	877
Մաշվածություն	352	353
Բանկային ծախսեր	316	283
Նորոգման և սպասարկման ծախսեր	178	157
Շահութահարկից բացի այլ հարկեր	148	254
Կոմունալ ծախսեր	138	207
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	96	237
Հեռահաղորդակցման ծախսեր	89	127
Մասնագիտական ծառայությունների ծախսեր	61	133
Իրացման ծախսեր	5	15
Այլ ընդհանուր և վարչական ծախսեր	780	817
Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր	10,732	11,826

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

21 Այլ գործառնական ծախսեր

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից առևտրային կրեդիտորական/դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	2,912	68
Պաշարների արժեզրկման գծով պահուստ	506	148
Վճարումներ ՀԾԿՀ-ին	343	323
Ֆինանսական ակտիվների և պայմանագրի գծով ակտիվների արժեզրկում (Ծանոթագրություն 10)	338	736
Մաշվածություն	287	668
Սոցիալական ենթակառուցվածքի պահպանման ծախսեր	231	33
Հիմնական միջոցների արժեզրկում	20	27
Տույժեր և տուգանքներ	1	11
Զուտ վնաս այլ պաշարների վաճառքից	1	99
Զուտ վնաս հիմնական միջոցների օտարումից	-	2
Այլ ծախսեր	527	455
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	5,166	2,570

22 Ֆինանսական եկամուտ

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից վարկերի և փոխառությունների գծով	-	989
Տոկոսային եկամուտ ժամկետային ավանդներից	51	49
Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառություններից	-	28
Տոկոսային եկամուտ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից	41	17
Այլ տոկոսային եկամուտ	3	-
Ընդամենը ֆինանսական եկամուտ	95	1,083

23 Ֆինանսական ծախսեր

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Տոկոսային ծախս	3,043	4,544
Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից վարկերի և փոխառությունների գծով	4,628	-
Ընդամենը ֆինանսական ծախսեր	7,671	4,544

24 Ծահութահարկ

(ա) Ծահութահարկի գծով ծախսի բաղադրիչները

Ծահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալը.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ընթացիկ հարկ	10	5
Հետաձգված հարկ	1,399	114
Ծահութահարկի գծով ծախս	1,409	119

(բ) Ծահույթի կամ վնասի՝ բազմապատկած կիրառելի հարկադրույթով և շահութահարկի գծով փոխհատուցման համադրում

Խմբի 2020թ. եկամտի նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույքը 18% (2019թ-ին՝ 20%): Հարկերի գծով ակնկալվող և իրական ծախսի միջև ճշգրտումը ներկայացված է ստորև.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Ծահույթ/(վնաս) մինչև հարկումը	708	643
Տեսականորեն հաշվարկված հարկի (ծախս)/փոխհատուցում օրենսդրությամբ սահմանված 18% դրույքաչափով (2019թ-ին՝ 20%)	(127)	(129)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Հարկի դրույքի նվազեցում*	-	(749)
- Չհարկվող եկամուտ	1,101	1,275
- Չնվազեցվող ծախսեր	(2,383)	(516)
Տարվա շահութահարկի գծով ծախս	(1,409)	(119)

* Ճանաչված գումարն իրենից ներկայացնում է 2020թ. հունվարի 1-ից գործող ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների համաձայն շահութահարկի 20% դրույքաչափը 18%-ի նվազեցնելու հետևանքը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.**

24 Շահութահարկ (շարունակություն)

(գ) Նախորդ տարիներից փոխադրված հարկային վնաս

Նախորդ տարիներից փոխադրված հարկային վնասի մարման ժամկետներն են.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Կուտակված հարկային վնասի մարման ժամկետները լրանում են հետևյալ ամսաթվերին.		
- 2024թ. դեկտեմբերի 31-ին	551	542
- 2020թ. դեկտեմբերի 31-ին	-	252
Ընդամենը նախորդ տարիներից փոխադրված հարկային վնաս	551	794

(դ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ-ի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև: Այդ ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև և գրանցված է 18% (2019թ.՝ 20%) դրույքաչափով:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	1 հունվարի 2020թ.	(Օախսագրվում է)/ կրեդիտագրվում է շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2020թ.
Ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից փոխադրված հարկային վնասի հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	3,505	(1,098)	2,407
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(1,994)	73	(1,921)
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	1,645	-	1,645
Պաշարներ	326	(56)	270
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	4	2	6
Տրամադրված փոխառություններ	247	(247)	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,931	(273)	1,658
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	80	(80)	-
Վարկեր և փոխառություններ	(63)	36	(27)
Պետական շնորհներ	(24)	8	(16)
Վարձակալության գծով պարտավորություններ	424	5	429
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(183)	474	291
Նախորդ ժամանակաշրջաններից փոխադրված հարկային վնաս	794	(243)	551
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	6,692	(1,399)	5,293
Ճանաչված հետաձգված հարկային ակտիվ	6,692	(1,399)	5,293

24 Ծահութահարկ (շարունակություն)

Խմբի ընթացիկ կառուցվածքի համատեքստում խմբի տարբեր ընկերությունների հարկային վնասները և ընթացիկ հարկային ակտիվները չեն կարող չեզոքացվել խմբի այլ ընկերությունների ընթացիկ հարկային պարտավորությունների և հարկվող շահույթների դիմաց, և համապատասխանաբար հարկերը կարող են հաշվեգրվել նույնիսկ, եթե առկա է համախմբված հարկային վնաս: Հետևաբար, հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեզոքացվում են միայն այն դեպքում, երբ վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	1 հունվարի 2019թ.	(Օսխասագրվում է)/ կրեդիտագրվում է շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2019թ.
Ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից փոխադրված հարկային վնասի հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	4,160	(655)	3,505
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	(1,994)	(1,994)
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	-	1,645	1,645
Պաշարներ	225	101	326
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	21	(17)	4
Տրամադրված փոխառություններ	274	(29)	245
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,855	76	1,931
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	89	(9)	80
Վարկեր և փոխառություններ	-	(63)	(63)
Պետական շնորհներ	(35)	11	(24)
Վարձակալության գծով պարտավորություններ	-	426	426
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(36)	(147)	(183)
Նախորդ ժամանակաշրջաններից փոխադրված հարկային վնաս	253	541	794
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	6,806	(114)	6,692
Ճանաչված հետաձգված հարկային ակտիվ	6,806	(114)	6,692

25 Նշանակալի անկանխիկ ֆինանսական գործունեություն

Ֆինանսական գործարքները, որոնք չեն պահանջել կանխիկ միջոցների և դրանց համարժեքների օգտագործում և բացառվել են համախմբված դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունից, հետևյալն են.

մ/ն. ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Անկանխիկ ֆինանսական գործունեություն		
Մուտքեր վարկերից և փոխառություններից՝ գազի գծով կրեդիտորական պարտքի վերակազմավորման ձևով	77,451	133,834
Անկանխիկ ֆինանսական գործունեություն	77,451	133,834

Մինչև 2019թ. ապրիլի 1-ը, եթե կապակցված կողմի հետ բնական գազի առքուվաճառքի պայմանագրի պարտքը չի վճարվել սահմանված մարման ժամկետից հետո 35 օրվա ընթացքում, ապա այն վերակազմավորվել է որպես փոխառություն՝ տարեկան 5.04% տոկոսադրույքով:

26 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ սովորական գործունեության ընթացքում Խմբի դեմ կարող են ներկայացվել հայցեր: Ելնելով իր գնահատականներից՝ ղեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

Հարկային պայմանական դեպքեր. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ենթակա է տարբեր մեկնաբանությունների՝ Խմբի գործունեության և գործարքների նկատմամբ դրանք կիրառելիս: Հետևաբար, ղեկավարության հարկային դիրքորոշումը և այդ դիրքորոշումը հիմնավորող պաշտոնական թղթակցությունը կարող են վիճարկվել համապատասխան մարմինների կողմից: Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարությունն աստիճանաբար խստանում է, ներառյալ այն փաստը, որ առկա է այն հարկային գործարքների ստուգման առավել բարձր հավանականություն, որոնք չունեն հստակ գործարար նպատակ կամ կապված են հարկային օրենսդրությանը չհամապատասխանող կողմերի հետ: Ֆիսկալ ժամանակաշրջանը հարկերի մասով բաց է մնում հարկային մարմինների կողմից ստուգման՝ ստուգումն անցկացնելու տարվան նախորդող երեք օրացուցային տարիների համար: Որոշակի հանգամանքների դեպքում ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակահատվածներ:

Կապիտալ ծախսումների պարտավորություններ. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի կապիտալ ծախսումներ պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների գծով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ բացակայում էին):

Գործառնական վարձակալման պայմանագրեր. Այն դեպքում, երբ Խումբը հանդիսանում է վարձակալ, գործում է մեկ ամիս առաջ ծանուցմամբ պայմանագիրը չեղյալ համարելու պայմանը: Ղեկավարությունն էական չի համարում ապագա վարձակալական վճարների այն մասնաբաժնի ընդհանուր գումարը, որը չի կարող չեղյալ համարվել:

26 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Շրջակա միջավայրի պահպանություն. Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգման համակարգը զարգանում է, և պետական մարմինների դիրքորոշումն այդ համակարգը ներդնելու հարցում շարունակաբար փոփոխվում է: Խումբը պարբերաբար գնահատում է իր պարտավորությունները շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգման համաձայն: Երբ պարտավորությունները որոշվում են, դրանք անմիջապես ճանաչվում են: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են ծագել գործող կանոնակարգերի, քաղաքացիական իրավական համակարգի կամ օրենսդրության փոփոխման հետևանքով, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Գործող օրենսդրության ընթացիկ կիրառման պայմաններում ղեկավարությունը կարծում է, որ չկան շրջակա միջավայրին վնաս հասցնելու հետևանքով առաջացած նշանակալի պարտավորություններ:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Խումբում ռիսկերի կառավարման գործառույթն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի նկատմամբ: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույթի և այլ գնային ռիսկը), վարկային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Վարկային ռիսկ. Խումբը ենթարկվում է վարկային ռիսկի, որն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով: Վարկային ռիսկն առաջանում է Խմբի կողմից վարկավորման պայմաններով վաճառք իրականացնելու և մյուս կողմերի հետ ֆինանսական ակտիվներ առաջացնող այլ գործարքներ իրականացնելու արդյունքում: Խմբի առավելագույն վարկային ռիսկն ըստ ակտիվների դասակարգման արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Խումբը կառավարում է իր վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ կոնտրագենտի կամ կոնտրագենտների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Վարկային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Խմբի ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել վարկային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 10-ում:

Վարկային ռիսկի կենտրոնացում. Խումբը ենթարկվում է վարկային ռիսկի կենտրոնացման ազդեցությանը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ հինգ կոնտրագենտ (2019թ.՝ յոթ կոնտրագենտ) 1,000 մլն. ՀՀ դրամից ավել ընդհանուր դեբիտորական պարտքերի մնացորդներով: Այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 38,571 մլն. ՀՀ դրամ (2019թ.՝ 33,602 մլն. ՀՀ դրամ) կամ առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի համախառն գումարի 64%-ը (2019թ.՝ առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի համախառն գումարի 57%-ը):

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ. Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր:

Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

Արժույթային ռիսկ. Արժույթային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական կտրվածքով: Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Խմբի՝ արժույթի փոխարկման հետ կապված ռիսկին ենթարկվածությունը:

	Առ 31 դեկտեմբերի 2020թ.			Առ 31 դեկտեմբերի 2019թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Զուտ հաշվեկշռային դիրք	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Զուտ հաշվեկշռային դիրք
<i>մլն. ՀՀ դրամ</i>						
ԱՄՆ դոլար	208	(97,199)	(96,991)	209	(89,561)	(89,352)
Եվրո	87	(1)	86	291	-	291
Ռուսական ռուբլի	75	(13)	62	23	-	23
Ընդամենը	370	(97,213)	(96,843)	523	(89,561)	(89,038)

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես որևէ էական արժույթային ռիսկ առաջացնող:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Խմբի ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	2020թ.	2019թ.
Մինչև հարկումը շահույթի կամ վնասի վրա ազդեցությունը		
ԱՄՆ դոլարի ամրապնդում 10%-ով (2019թ.՝ ամրապնդում 10%-ով)	(9,699)	(8,935)
ԱՄՆ դոլարի անկում 10%-ով (2019թ.՝ անկում 10%-ով)	9,699	8,935
Եվրոյի ամրապնդում 10%-ով (2019թ.՝ ամրապնդում 10%-ով)	9	29
Եվրոյի անկում 10%-ով (2019թ.՝ անկում 10%-ով)	(9)	(29)

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ենթարկվածությունը հաշվարկվել է Խմբի ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված դրամական մնացորդների համար:

Տոկոսադրույքի ռիսկ. Խումբը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքի վրա ազդող ռիսկին, որն առաջանում է շուկայական տոկոսադրույքների տատանումների հետևանքով: Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է Խմբի ենթարկվածության աստիճանը տոկոսադրույքի ռիսկին: Աղյուսակը ներկայացնում է Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներով արտահայտված գումարային չափերը, որոնք դասակարգված են՝ ելնելով այն հանգամանքից, թե որն է ավելի վաղ՝ պայմանագրային տոկոսադրույքի վերասահմանումը, թե մարման ժամկետը:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1 ամսից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	12 ամսից մինչև 5 տարի	Ընդամենը
31 դեկտեմբերի 2020թ.					
Տոկոսային ֆինանսական ակտիվներ	2,350	715	150	-	3,215
Տոկոսային ֆինանսական պարտավորություններ	(39,562)	(23,038)	(22,994)	(11,530)	(97,124)
Զուտ տոկոսի զգայունության տարբերություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(37,212)	(22,323)	(22,844)	(11,530)	(93,909)
31 դեկտեմբերի 2019թ.					
Տոկոսային ֆինանսական ակտիվներ	5,704	35	195	632	6,566
Տոկոսային ֆինանսական պարտավորություններ	(42,100)	-	(2,366)	(49,598)	(94,064)
Զուտ տոկոսի զգայունության տարբերություն 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(36,396)	35	(2,171)	(48,966)	(87,498)

Խումբը չունի տոկոսադրույքի ռիսկերի կառավարման համար ընդունված պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր, քանի որ դեկավարությունը համարում է, որ այս ռիսկն էական չէ Խմբի գործունեության համար:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Խումբը վերահսկում է տոկոսադրույքներն իր ֆինանսական գործիքների համար: Ստորև բերված աղյուսակում ամփոփվում են արդյունավետ տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ հիմնված հիմնական ղեկավար անձնակազմի կողմից դիտարկված հաշվետվությունների վրա:

Տարեկան %	2020թ.			2019թ.		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ակտիվներ						
Տրամադրված փոխառություններ	0 – 12.0	-	-	0 – 12.0	-	-
Ժամկետային ավանդներ	6 – 9.25	2.45	-	6.0 – 9.25	2.45	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1.0 – 5.0	-	-	0.5 – 7.5	3.0	4.0
Պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	-	5.04 – 7.0	-	-	4.0 – 7.0	-

Վերը ներկայացված աղյուսակում «-» նշանը նշանակում է, որ Խումբը չունի համապատասխան արժույթով ակտիվներ կամ պարտավորություններ:

Դրամական միջոցների զգայնության վերլուծություն փոփոխական տոկոսադրույքով գործիքների համար

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունը 100 բազիսային կետով կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը մինչև հարկերումը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

մլն. ՀՀ դրամ	Շահույթ կամ վնաս		Սեփական կապիտալ	
	100 բլ աճ	100 բլ նվազում	100 բլ աճ	100 բլ նվազում
2020թ.				
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	(576)	576	(472)	472
Դրամական հոսքերի զգայնություն	(576)	576	(472)	472
2019թ.				
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ	(527)	527	(432)	432
Դրամական հոսքերի զգայնություն	(527)	527	(432)	432

Տոկոսադրույքի մակարդակի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի ռիսկի կառավարումը համարվել է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերահսկմամբ:

Այլ գնային ռիսկ. Խումբը ենթարկված չէ բաժնեմասային գնի ռիսկի:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ կազմակերպությունը դժվարանում է ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունների կատարման ժամանակ: Խումբն օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջի խնդրին:

Իրացվելիության ռիսկը կառավարվում է Խմբի ֆինանսական բաժնի կողմից: Ղեկավարությունն ամսական կտրվածքով վերահսկում է Խմբի դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները:

Ֆինանսական բաժինը վերահսկում է Խմբի դիրքն ամսական կտրվածքով, ինչպես նաև նոր հնարավոր վարկերի և փոխառությունների ձեռքբերման ընթացքում իրականացվող գնահատման ժամանակ և հաշվետվություն է պատրաստում և ներկայացնում Խմբի ֆինանսական տնօրենին, որը վերջնական պատասխանատվություն է կրում իրացվելիության պահանջվող մակարդակը պահպանելու համար:

Խումբն աշխատում է պահպանել կայուն ֆինանսավորման հիմք, որն առաջնայնորեն բաղկացած է բանկերին վճարվելիք գումարներից և պարտքային արժեթղթերից: Խումբը ֆինանսական միջոցների ներդրումներ է կատարում իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված փաթեթում, որպեսզի արագորեն և անմիջականորեն բավարարել չնախատեսված իրացվելիության պահանջները: 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի իրացվելիության փաթեթը բաղկացած է ժամկետային ավանդներից (Ծանոթագրություն 11) և դրամական միջոցներից և դրանց համարժեքներից (Ծանոթագրություն 12): Ըստ ղեկավարության գնահատման՝ իրացվելի պորտֆելը կարող է իրացվել կանխիկով մեկ օրվա ընթացքում՝ չնախատեսված իրացվելիության պահանջները բավարարելու համար:

Իրացվելիության դիրքը վերահսկվում է, և Ընկերության ֆինանսական բաժինը պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ստորև ներկայացված աղյուսակները ցույց են տալիս պարտավորությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ իրենց պայմանագրային մնացորդային ժամկետայնությամբ: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են, ներառյալ ապագա տոկոսային վճարները և համախառն փոխառվական պարտավորությունները: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներառված գումարից, քանի որ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1 ամսից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	12 ամսից մինչև 5 տարի	Ընդամենը
Պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	13	24,088	23,617	11,654	59,372
Վարձակալության գծով պարտավորություններ	-	2,388	-	-	2,388
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	41,265	-	-	-	41,265
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարները	41,278	26,476	23,617	11,654	103,025

Տարեվերջից հետո Խումբը երկարաձգել է իր վարկի մնացորդների 57,485 մլն. ՀՀ դրամ մայր գումարի մարման ժամկետը 2023թ. փետրվարից 2024թ. փետրվարը:

27 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1 ամսից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	12 ամսից մինչև 5 տարի	Ընդամենը
Պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	11	1,535	1,602	55,165	58,313
Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	2,366	-	2,366
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	39,009	-	-	-	39,009
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարները					
	39,020	1,535	3,968	55,165	99,688

28 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման ժամանակ Խմբի նպատակներն են. պահպանել Խմբի կարողությունը՝ շարունակելու իր գործունեությունն անընդհատության սկզբունքով՝ ապահովելով հասուցում բաժնետերերին և օգուտներ շահառուների այլ խմբերին և հաստատել կապիտալի օպտիմալ կառուցվածք՝ նվազեցնելով կապիտալի արժեքը: Կապիտալի կառուցվածքը հաստատելու և ճշգրտելու համար Խումբը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ նվազեցնելով պարտքը: Խումբը դիտարկում է կառավարման ներքո գտնվող ընդհանուր կապիտալը՝ որպես սեփական կապիտալ, ինչպես այն ցույց է տրված համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից կառավարվող կապիտալի չափը 283,963 մլն. ՀՀ դրամ է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 284,664 մլն. ՀՀ դրամ):

29 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք ակնկալվում են ստացվել նույն վարկային ռիսկ և մնացորդային մարման ժամկետ ունեցող նոր գործիքներն ընթացիկ տոկոսադրույքով զեղչելիս: Զեղչման համար օգտագործվող տոկոսադրույքները կախված են կոնտրագենտի վարկային ռիսկից:

Անորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Պարտավորությունների իրական արժեքը որոշվել է օգտագործելով գնահատման մեթոդներ: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը գնահատվում է ակնկալվող դրամական միջոցների հոսքերով՝ զեղչելով նույն վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքով: Ցպահանջ կամ ծանուցման ժամանակաշրջանից հետո մարվող պարտավորությունների («պահանջի դեպքում մարման ենթակա պարտավորություններ») իրական արժեքը գնահատվում է որպես պահանջի դեպքում մարման ենթակա գումար՝ զեղչված սկսած պարտավորությունը մարելու հնարավոր պահանջի ներկայացման առաջին ամսաթվից: Գործածված զեղչված տոկոսադրույքները տատանվում են տարեկան 5%-ից մինչև տարեկան 11%-ը՝ կախված պարտավորության տևողությունից և արժույթից:

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

30 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների

Չափման նպատակների համար ՖՀՄՍ 9-ը «Ֆինանսական գործիքներ» դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) ամորտիզացված արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային գործիքներ, (գ) ամորտիզացված արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ և (դ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա (i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով պարտադիր չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ կամ հետագայում: Բացի այդ, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը ներկայացնում են առանձին կատեգորիա:

Ստորև աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների ներկայացումը վերոգրյալ չափման կատեգորիաներով՝ առ 31 դեկտեմբերի 2020թ.:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Ամորտիզացված արժեքով 2020թ.
Ակտիվներ	
<i>Տրամադրված փոխառություններ</i>	17
<i>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 10)</i>	
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, գուտ	52,295
<i>Ժամկետային ավանդներ (Ծանոթագրություն 11)</i>	
- Երեք ամսից ավել սկզբնական մարման ժամկետով ավանդներ	865
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 12)</i>	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	9,588
- Կարճաժամկետ ավանդներ	-
- Դրամական միջոցներ ճանապարհին	4,522
- Առձեռն դրամական միջոցներ	33
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	67,320

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
առ 31 դեկտեմբերի 2020թ.

30 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների (շարունակություն)

Ստորև աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների ներկայացումը վերոգրյալ չափման կատեգորիաներով՝ առ 31 դեկտեմբերի 2019թ.:

<i>մլն. ՀՀ դրամ</i>	Ամորտիզացված արժեքով 2019թ.
Ակտիվներ	
<i>Տրամադրված փոխառություններ</i>	15
<i>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 10)</i>	
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, գուտ	43,897
<i>Ժամկետային ավանդներ (Ծանոթագրություն 11)</i>	
- Երեք ամսից ավել սկզբնական մարման ժամկետով ավանդներ	847
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 12)</i>	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	5,454
- Կարճաժամկետ ավանդներ	1,861
- Դրամական միջոցներ ճանապարհին	1,445
- Առձեռն դրամական միջոցներ	11
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	53,530

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բոլոր ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: